53 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 9 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 9 № 53

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲՈԻՆԱԿՎՈՒՄԷ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., ամսական 1 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միսիօնարները Փոքր-Ասիայում. Հարկուրտի ճառը Սօլսբիւրիի դէմ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Դատարկ կարասներ». Նաւթարդիւնաբերողների X ժողովը. Մատենագրութիւն. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Մեղրիից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նասր-էդ-դին Շահ.

ՄԻՍԻՕՆԱՐՆԵՐԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ

Բողոքական և կաթոլիկ միսիօնարները վաղուց ի վեր վայելում էին յայտնի արտօնութիւններ ասիական երկիրների մէջ։ Եւրոպական պետութիւնները միշտ պաշտպանել են իրանց հպատակ և կրօնակից միսիօնարներին և շատ անգամ շօշափելի հովանաւորութիւն են ցոյց տուել այն քրիստոնեայ համայնքներին, որոնք դաւանում են միսիօնարների կրօնը։

Իրանք՝ միսիօնարները միշտ աշխատել են իրանց հեռու պահել քաղաքական խնդիրներից։ Եւ այդ պատճառով տեղական իշխանութիւնները սրանց վրա նայել են, իբրև կուլտուրական համեստ գործողների վրա, որոնք տարածում են գրագիտութիւն և արհեստ, ընտելացնում են ժողովուրդը ինքնօգնութեան, հայցնում են աղէտների ժամանակ բժշկական և նիւթական նպաստներ։

Սակայն վերջին տարվայ անցքերը Թիւրքաց-Հայաստանում փոխեցին թիւրքաց իշխանութեան տրամադրութիւնը դէպի եւրոպական միսիօնարները։ Ճիշդ է, անկարելի եղաւ ապացուցանել, որ միսիօնարները խառն են որ և է ապստամբական շարժման մէջ. նրանք առաջվայ պէս զբաղված էին իրանց գործունէութեամբ, օգնելով կարօտեալներին, աղքատներին, վիրաւորներին. բայց նոյն իսկ այն հանգամանքը, որ միսիօնարները հանդէս են գալիս իբրև ապաստան տուող, օգնող, բարեխօսող այժեր երկրի մէջ, և վերջապէս իբրև կենդանի վկաներ այն եղելութիւնների, որ տեղի ունեն հայկական գաւառների խուլ անկիւններում, նոյն այդ հանգամանքը նրանց դարձրեց շատ անախորժ մի տարր Թիւրքիշխանութեան համար։

Ամերիկական միսիօնարների վերաբերութեամբ յարուցած խստութիւնը միայն մի փորձ էր իմանալու եւրոպական պետութիւնների տրամադրութիւնը դէպի միսիօնարներին արտաքսելու խնդիրը, որով այժմ զբաղված են Բօսֆորի քաղաքագէտները։ Սակայն փորձը բաւարար հետևանքներ չը տուեց։ Կաթոլիկ միսիօնարները մեծ դժգոհութիւն ցոյց տուին և Ֆրանսիական դեսպան Կամբոն հասկացրեց, որ նա ամենախիստ կերպով պէտք է պաշտպան հանդիսանայ Ֆրանսիական հպատակներին, լինեն նրանք հոգևորական, թէ աշխարհական։

Սկզբում մահմեդական ամբոխը խորութիւն էր դնում լուսաւորչականների և կաթոլիկների ու բողոքականների մէջ։ Եւրոպացիները և նրանց կրօնակիցները մնում էին անձեռնմխելի և վայելում էին միայն անպաշտպան լուսաւորչականները։ Սակայն ֆանատիկոսական շարժումը այլ ևս չը կարողացաւ սահմանափակվել այդ շրջանում և սկսեց գործել անողոք լոգիկայով։ Շուտով նա մակաբերեց, որ քրիստոնեան քրիստոնեայ է, ինչ կերպարանքով էլ նա առաջ գայ, և Թիւրք ամբոխը սկսեց յարձակվել թէ կաթոլիկների և թէ բողոքականների վրա։

Թիւրքաց պետութեան ներկայացուցիչները մեծ ցաւ են յայտնում տեղի ունեցած տխուր եղելութիւնների պատճառով։ Նրանք հաւատացնում են, որ կառավարութիւնը լուրջ կերպով զբաղված է այդ անկարգութիւնների առաջն առնելու խնդրով, և իբրև ապացոյց՝ կազմակերպում են նոր զօրագնդեր և ուղարկում երկրի զանազան կողմերը... Սակայն, չը նայած այդ խոստումներին, հալածանքը շարունակվում է, թէև խուլ կերպով, և միսիօնարներին փրկել ուրիշ ոչինչ չէ կարող, բայց եթէ պետութիւնների խիստ սպառնալիքը, որից միայն Կ. Պոլսում գիտեն վախենալ։

ՀԱՐԿՈՒՐՏԻ ՃԱՌԸ ՍՕԼՍԲԻՒՐԻԻ ԴԷՄ

Անգլիական ազատամիտ կուսակցութեան փայլուն ատաղերից մէկը, Ուիլիամ Հարկուրտ, մայիսի 5-ին, «ազատամիտների կլուբում», մեծ բազմութեան առաջ խօսեց մի ընդարձակ և խելացի ճառ, որով խիստ քննադատութեան ենթարկեց Սօլսբիւրիի սխալ և ամօթաբեր քաղաքականութիւնը՝ թէ արտաքին և թէ ներքին խնդիրներում։ Մենք առաջ կը բերենք այն կտորը, որը վերաբերում է Սօլսբիւրիի բացատրութիւններին՝ Թիւրքիայի գործերի վերաբերութեամբ։

«Ինչ տեսակէտներ էլ որ ունենար անգլիական ազգը Սօլսբիւրիի վերաբերութեամբ, մի բանի վրա յամենայն դէպս այդ ազգը յոյս ունէր, այն է, որ Սօլսբիւրիի անձնաւորութեան մէջ նա պէտք է ունենայ արտաքին գործերի մի գերազանց մինիստր։ Այն կարծիքը կար, որ Սօլսբիւրին պէտք է գրաւի և Եւրոպայի զգացմունքները, իբր թէ նա պէտք է՝ Անարոնի գաւազանի նման՝ կուլ տար բոլոր օտար օձերին։ Սակայն չանցաւ երեք-չորս ամիս և ահա բոլորովին փոխվեց Սօլսբիւրին և նա ամենևին գերազանց մինիստր չը դուրս եկաւ։

«Դեռ մի քանի օր սրանից առաջ Սօլսբիւրին Primrose league-ում մի ճառ արտասանեց, որով աշխատում էր իրան արդարացնել հայոց հարցում։—Ինչ ասաց նա։—Նա գովեց Թիւրքաց սուլթանին, որի մասին նա մի քանի ժամանակ առաջ այնպէս խիստ լեզու էր գործածել. նա չեշտեց, որ սուլթանը պատասխանատու չէ Թիւրքիայում գործվող չարիքների համար։ Նոյն գերազանց մինիստրը մի քանի ամիս առաջ գտնում էր, որ այն, ինչ թոյլ է տալիս Թիւրքաց սուլթանը, դէմ է թէ քնութեան և թէ աստուածային օրէնքներին, իսկ այժմ հաւատացնում է մեզ, որ այդ բոլորը միայն յորդորելու և խրախուսելու ձևեր էին, որ նա գործ էր ածում սուլթանի վրա ազդելու համար, թէև այն կարծիքի էր, որ ոչ մի յորդոր և խրատ չեն կարող որ և է էական նշանակութիւն ունենալ մի օտար պետութեան համար։ Եւ այդ բանի համար Սօլսբիւրին մեղադրում է իր նախորդներին, որոնք իբր թէ նրա համար թողել էին միայն այդ զէնքը, այսինքն յորդորը և խրատը։

«Սօլսբիւրին յայտնում է, որ Բոզբէրին նախօրօք չէր տեղեկացել, թէ արդեօք եւրոպական պետութիւնները ցանկանում են միասին գործել, և սպառնալիքներ էր կարդում Թիւրքիային, մինչդեռ միւս պետութիւնները ամենևին մտադիր չէին միասին գործելու։ Եթէ այդ այդպէս է, ինչի ուրեմն նոյն Սօլսբիւրին ինքը ամեն անգամ հրապարակով յայտնում էր, որ եւրոպական պետութիւնները համերաշխ և միաձայն են գործում Թիւրքիայի վերաբերմամբ, որ եւրոպական կօնցերտը ամուր է և հաստատ։ Եւ միթէ կարելի է ասել, որ այդ տեսակ մի մինիստր, որը կոչված է ղեկավարելու արտաքին գործերը, կարող է լուրջ յարգանք վայելել օտար պետութիւնների կողմից և գրաւական լինել աջող միջազգային քաղաքականութեան։ Նրա թեթևամտութիւնը, նրա ցինիկական խոստովանութիւնը Նասրէդդին Շահը չը կարողացաւ իր ծրագրած ուղեցոյցով տանել այն պատճառով, որ նրա բացակայութեան ժամանակ մի դաւադրութիւն սարքվեց Թէհրանում այն ժամանակվայ առաջին մինիստր Սպահ-սալար (սպասալար) Միրզայ Հուսէյն խանի դէմ։ Թէհրանի աւագանին շատ հակառակ էր այդ մեծ-վիզիրին, որ մի ժամանակ գրաւել էր Շահի ամբողջ համակրութիւնը և վստահութիւնը, ուստի նա հեռագիր ուղարկեց Շահին չը բերել հետը Պարսկաստան սպասալարին։ Շահը սաստիկ զայրացաւ այդ յանդգնութեան դէմ և ընդհատելով ճանապարհորդութիւնը, յանկարծակի վերադարձաւ Թէհրան։ Դաւադիրները խիստ պատիժ կրեցին. դրանց թւումն էր և հայազգի Ջհանգիր խանը, որը նոյնպէս ստորագրել էր Շահին ուղարկած հեռագիրը։ Ջհանգիր խանը այնքան սիրված էր Շահից, որ վերջինս նրան «Ամ» էր անուանում, այդ պատճառով և Ջհանգիր խանի միանալը բողոքող աւագանու հետ մեծ ցաւ պատճառեց Շահին։ Ջհանգիր խանը պաշտօնանկ եղաւ, զրկվեց գոյքից և ատիճաններից, սակայն մի քանի տարուց յետոյ Շահը ներեց նրան և վերադարձրեց նրա առաջին պատիւը ու պաշտօնը։

Այդ ճանապարհորդութիւնները աւելի ամրացրին Շահի մէջ այն համոզմունքը, թէ պէտք է վերանորոգել Պարսկաստանը, քանդել այն չինական պատը, որը բաժանում է նրան Եւրոպայից։ Եւ եօթանասնական թւականներից սկսած եւրոպական կուլտուրան, եթէ ոչ հսկայական, գէթ աչքի ընկնող քայլերով սկսեց առաջանալ խաւարչջակայ գիւղերի հայերն էլ մեծ ջնաներ կրեցին և ահագին քանակութեամբ գաղթեցին զանազան տեղեր—դէպ ասորատան։ Եթէ չը լինէր Եւրոպայի, մանաւանդ Անգլիայի մարդասիրական օգնութիւնը, Պարսկաստանը կարող էր ամայանալ իր բնակիչներից։ Այդ զարհուրելի սովը, որի աղետաբեր հետևանքները մինչև այսօր ևս կրում է Պարսկաստանը, համոզեց Շահին, որ պէտք է արմատական միջոցներ ձեռք առնել երկրի բարեկարգութեան համար։ Եւ դրանից յետոյ, նրա թագաւորութեան երկրորդ կէսը շատ խիստ կերպով տարբերվում է առաջին կէսից իր վերանորոգչական ուղղութեամբ։

Բայց նախ քան իր վերանորոգչական գործունէութիւնը սկսելը Շահը հարկաւոր համարեց անձամբ ծանօթանալ Եւրոպայի հետ։ Եւ 1873 թվին առաջին անգամ նա ճանապարհորդեց Եւրոպա։ Առաջին անգամն էր, որ Պարսկաստանի Շահն-Շահը որոշեց այցելել դեսպանների և քաֆիրների երկիրը, հակառակ հոգևորականութեան և չերիաթի տրամադրութեան և դրանով աւելի դրդեց այդ հոգևորականութեան ատելութիւնը։ Սակայն Եւրոպան այնքան գրաւեց Շահին, որ նա, 1878 թվին երկրորդ անգամ, իսկ 1889 թվին երրորդ անգամ ճանապարհորդեց։ Վերջին ճանապարհորդութեան ժամանակ նա իր հետ վեր առաւ և Ամին-Սուլթան Միրզա Ալի-Ասղար խանին, մեծ վիզիրին, նրան, որը այժմ Սադր-Ազէմ անունով կառավարում է ժամանակաւորապէս երկիրը մինչև նոր Շահի՝ Մուզաֆֆէր-էդ-դինի Թէհրան հասնելը։ Երկրորդ ճանապարհորդութիւնը Նասրէդդին Շահը չը կարողացաւ իր ծրագրած ուղեցոյցով տանել այն պատճառով, որ նրա բացակայութեան ժամանակ մի դաւադրութիւն սարքվեց Թէհրանում այն ժամանակվայ առաջին մինիստր Սպահ-սալար (սպասալար) Միրզայ Հուսէյն խանի դէմ։ Թէհրանի աւագանին շատ հակառակ էր այդ մեծ-վիզիրին, որ մի ժամանակ գրաւել էր Շահի ամբողջ համակրութիւնը և վստահութիւնը, ուստի նա հեռագիր ուղարկեց Շահին չը բերել հետը Պարսկաստան սպասալարին։ Շահը սաստիկ զայրացաւ այդ յանդգնութեան դէմ և ընդհատելով ճանապարհորդութիւնը, յանկարծակի վերադարձաւ Թէհրան։ Դաւադիրները խիստ պատիժ կրեցին. դրանց թւումն էր և հայազգի Ջհանգիր խանը, որը նոյնպէս ստորագրել էր Շահին ուղարկած հեռագիրը։ Ջհանգիր խանը այնքան սիրված էր Շահից, որ վերջինս նրան «Ամ» էր անուանում, այդ պատճառով և Ջհանգիր խանի միանալը բողոքող աւագանու հետ մեծ ցաւ պատճառեց Շահին։ Ջհանգիր խանը պաշտօնանկ եղաւ, զրկվեց գոյքից և ատիճաններից, սակայն մի քանի տարուց յետոյ Շահը ներեց նրան և վերադարձրեց նրա առաջին պատիւը ու պաշտօնը։

Այդ ճանապարհորդութիւնները աւելի ամրացրին Շահի մէջ այն համոզմունքը, թէ պէտք է վերանորոգել Պարսկաստանը, քանդել այն չինական պատը, որը բաժանում է նրան Եւրոպայից։ Եւ եօթանասնական թւականներից սկսած եւրոպական կուլտուրան, եթէ ոչ հսկայական, գէթ աչքի ընկնող քայլերով սկսեց առաջանալ խաւա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՐ-ԷԴ-ԴԻՆ ՇԱՀ

V

Իր թագաւորութեան առաջին մասը, սկսած 1848 թվից մինչև 1870 թիւը, Նասրէդդին Շահը գործ դրեց ներքին խռովութիւնները վերացնելու, բաբիներին հալածելու և նրանց զսպելու, թիւրքմէնների, Բուխարայի և Խիվայի դէմ պատերազմներ մղելու վրա։ 1851 թվին, Նիավարանի ճանապարհի վրա, բաբիները փորձեցին սպանել Շահին այն ժամանակ, երբ Շահը որսի էր գընում, բայց անաջող—Շահը ստացաւ միայն մի թեթև վէրք։ Բայց սարսափելի եղաւ այն հալածանքը, որ սկսվեց բաբիների դէմ և այն տանջանքները, որոնց ենթարկվեցին նրանք ամբողջ Պարսկաստանում։ Այդ հալածանքի ժամանակ անգթութեան այնպիսի քսամնելի տեսարաններ տեղի ունեցան, որոնք Նասրէդդին Շահի թագաւորութեան համար միշտ մի մեծ և անջնջելի արատ կը մնան։ Դրանից յետոյ խորասանում ծագեց մի մեծ ապստամբութիւն, որ լայն ծաւալ ստացաւ և որը զսպելու համար Շահը մեծ ջանքեր գործ դրեց։

Արտաքին պատերազմները թիւրքմէնների, բուխարացիների և խիվացիների դէմ բաւական աջող անցան, բայց երբ 1856 թվին Նասրէդդին Շահը մտածեց նորից ձեռք դցել Հէրաթը, որը Նադիր Շահի օրով պատկանում էր Պարսկաստանին, յոյսը դնելով Ռուսաստանի օգնութեան վրա, նրա այդ փորձը անաջող անցաւ, որովհետև Անգլիան պաշտպան դուրս եկաւ Հէրաթին։ Հնդկաստանի բրիտանական կառավարութիւնը մի զօրախումբ ուղարկեց, որը գրաւելով Կարախը և Բուշիրը, սկսեց առաջ խաղալ դէպի Թէհրան. այդ տեսնելով, Շահը ստիպվեց յետ առնել իր պահանջները և ձեռք քաշել Հէրաթը գրաւելու իր դիտաւորութիւնից։

Կրիմի պատերազմի ժամանակ Թիւրքիան և Անգլիան ամեն ջանք գործ դրին ստիպել Շահին միանալ Ռուսաստանի թշնամիների հետ և թշնամական գործողութիւններ սկսել Ռուսաստանի դէմ, բայց Նասրէդդին Շահը, որ լաւ գիտէր թէ որքան կորստաբեր են եղել Պարսկաստանի համար Ռուսաստանի հետ սկսած պատերազմները, խոհեմութեամբ վարվեց և իրան չէզոք պահեց, մանաւանդ որ Պարսկաստանը կապված էր Ռուսաստանի հետ Գիւլստանի և Թիւրքմէնչայի դաշնագիրներով։

Դրանից յետոյ, վաթսունական թւականներին, Շահը սկսեց լուրջ կերպով մտածել իր նախկին դաստիարակ Ամիր-Նիզամի ծրագիրը իրագործելու և Պարսկաստանում եւրոպական ըէֆորմներ մըցնելու մասին։ Բայց այս անգամ ևս բախտը չը ժպտաց նրան։ 1862-ին և 1866-ին համաճարակ խոլերան մեծ կոտորածներ արեց երկրի մէջ, իսկ 1872-ի սարսափելի սովը անկարագրելի աւերումներ գործեց։ Միայն Մէշէդ քաղաքում 120 հազար բնակիչներից 80 հազարը ջարդվեց սովից։ Այդ ժամանակ Սպահանի, Նոր-Ջուղայի և

ները, նրա դատարկ յորդորները, որոնք արտասանվում էին Թիւրքիայի վերաբերութեամբ միայն ձեի համար, առանց համոզված լինելու, որ նրանք պէտք է նշանակութիւն ունենան,—այդ բոլորը վայր է դցում մեր արտաքին քաղաքականութեան վարկը Եւրոպայի առաջ»:

Անդլիական աղատամիտ լրագիրները այն կարծիքն են յայտնում, որ Սոլսբիւրին այնքան էլ միամիտ չէ, որ այդ տեսակ անմտութիւններ խօսի. նրանք Սոլսբիւրիի այդ ֆոկուսները բացատրում են նրանով, որ նա մի որ և է ձև է որոնում իր անաջողութիւնները քողարկելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԴԱՏԱՐԿ ԿԱՐԱՍՆԵՐ»

—

Ձեզ, ընթերցող, անուշտ լաւ ծանօթ է դատարկ կարասի գլխաւոր յատկութիւնը.—ինչ ձայն տաք, ինչ խօսք ասէք, ինչ հնչիւն արտասանէք, դատարկ կարասը կը կրկնի նոյնը, կը վերադարձնի նոյնութեամբ:

Հայոց փողոցային մամուլն այս բոլորէս մի դատարկ կարաս է, որ սեփական ոչինչ չունենալով, ոչ մի բանի շնորհ և նախաձեռնութիւն չը զգալով, դատարկ կարասի նման կրկնում է այն, ինչ ասում էք իրան, վերադարձնում է այն, ինչ արտասանվել է նրա հասցէին:

Դուք, հիմնվելով տասն, քսան, հարիւր փաստերի վրա, ասում էք նրանց՝ չը պէտք է կլանել դպրոցի, եկեղեցու, թշուառների, հրկիզեալների փողերը.—փողոցային մամուլը, դատարկ կարասի նման կրկնում է՝ «Չը պէտք է կլանել դպրոցի, եկեղեցու, թշուառների, հրկիզեալների փողերը»:

Դուք, հիմնվելով հաղարաւոր փաստերի վրա, և ցոյց տալով թէ ինչպէս մի խումբ անբարոյականացած, ամեն տեղից քշված մարդիկ, առաւօտից մինչև երեկոյ զբաղվում են գրչավաճառութեամբ, մտքի առևտրով, գրական ֆալսիֆիկացիայով, բացականչում էք՝ «Պէտք է արտաքսել գրականութիւնից գրչավաճառներին». փողոցային մամուլը կրկնում է՝ «Պէտք է արտաքսել գրչավաճառներին»:

Դուք թուելով անվերջ փաստեր, թէ ինչպէս անբարոյական գրչավաճառները առաւօտից մինչև երեկոյ զբաղված են ինսինուացիաներով, ստեր հնարելով, փաստեր աղաւաղելով, ներշնչված արդար զայրոյթով ասում էք՝ «պէտք է յարգել տպագրական խօսքը, վերջ պէտք է տալ անվերջ ստերին և ինսինուացիաներին». փողոցային մամուլը էլի կրկնում է՝ «Վերջ պէտք է տալ անվերջ ստերին և ինսինուացիաներին»:

Դուք յարձակվելով դիցուք մի այնպիսի հակակրելի ժուրնալիստի վրա, ինչպէս է մի խոնարհ ուսուցչի (տես «Մշակ» № 29, մարտի 9), համեմատում էք նրան հայոց մամուլի գրչավաճառների, մտավաճառների հետ, որոնք մի խմբագրութիւնից միւսը տեղափոխվելով՝ այսօր ցեխի կոյտեր են շպրտում նրանց վրա, որոնց երէկ պաչում էին և հակառակը. և ահա փողոցային մամուլը, դատարկ կարասի նման նոյն խօսքերով յարձակվում է խոնարհի վրա, նոյն խօսքերով համեմատում է նրան ուրիշների հետ, նոյն համարձակութեամբ գործ է ածում գրչավաճառ, մտավաճառ և այլ այդպիսի բառեր...

Ո՞ր մէկը թուենք: Դուք ասում էք՝ «խաւարամիտ էք», նրանք պատասխանում են՝ «խաւարամիտ էք»: Դուք ասում էք՝ «մամուլը դարձել էք փողոց», նրանք պատասխանում են՝ «փողոց»: Դուք ասում էք՝ «հեռու, ձեր կեղտոտ ձեռքերով մի ապականէք մամուլի սրբութիւնը», նրանք կրկնում են «մամուլի սրբութիւնը», և այդպէս անվերջ, ամիսների, տարիների ընթացքում...

Աւելացրէք այդ բոլորի վրա, թէ ինչպէս այդ դատարկ կարասների ամբողջ «գործունէութիւնը» սոսկալի փաստերի մի ամբողջ շարք է ներկայացնում,—միթէ հարկաւոր է թուել,—և դուք կը հասկանաք, թէ ինչ բարոյական հրէշներ են այն մարդիկ, որոնք համարձակվում են կանգնել ընթերցողի առաջ և խօսել... ինչ էք կարծում, ինչի մասին, ոչ թէ խաբեբայութեան, ինտրիգաների, ինսինուացիաների, կլանելու, դաւեր սարքելու մասին, այլ աղնութեան, մամուլի նշանակութեան, հասարակական բարքերի մասին...

Եւ այդ «դատարկ կարասները» կոչվում են մամուլ, որոնց դժբաղդ հասարակութիւնը ստիպված է կարդալ: Փառք Աստուծոյ, որ այդ դատարկ կարասները մէկը միւսի ետևից փչըրվում են, գուցէ չուտով բոլորովին չեն լինի:

ՆԱԻԹԱՐԴԻՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ X ԺՈՂՈՎԸ

—

Նաւթարդինաբերողների ժողովի երկրորդ նիստը, որ կայացաւ ապրիլի 21-ին, նուիրված էր գլխաւորապէս խորհրդի անցեալ տարվայ գործունէութեան և վերաստուգող յանձնաժողովի զեկուցման քննութեանը:

Ժողովականներից ոմանք մեղադրում էին խորհրդին, որ նա նախահաշվի համաձայն չէ վարվել, հակառակ նախորդ ժողովի տրամադրութեան և որոշման աւելորդ ծախսեր է արել, ինչպէս, օրինակ, նաւթարդինաբերողների Պետերբուրգի ներկայացուցիչ Մ. Լազարեվին տըրված ռոճիկը և այլն: Պետերբուրգում ներկայացուցիչ ունենալու խնդիրը անցեալ IX ժողովի ժամանակ երկար վիճաբանութիւնների նիւթ դարձաւ: Ժողովի մեծամասնութիւնն այն կարծիքի էր, որ ներկայացուցչի պատուաւոր պաշտօնը չը պէտք է կապել ռոճիկի, նիւթական վարձատրութեան հետ: Ենթադրում էին շատերը, որ այնտեղ, Պետերբուրգում, կարելի կը լինի յատկացնել այդ պատուաւոր պաշտօնը նոյն իսկ Նոբել եղբայրների ընկերութեան, կամ մի ուրիշ նաւթարդինաբերողի, որ այս կամ այն պատճառով գտնվում է չարունակ Պետերբուրգում: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ նախորդ ժողովը իր նախահաշվի մէջ մտցրել է 2,615 ռուբլի՝ երևի ներկայացուցչի ընթացիկ ծախսերի համար միմիայն... Խորհուրդը այդ 2,615 ռուբլու դիմաց 9,000 ռուբլի ռոճիկ է ցոյց տալիս, որը տրվել է ինն ամսվայ ընթացքում ներկայացուցիչ Մ. Լազարեվին: Այս և ուրիշ մի քանի նախահաշվից դուրս ծախսեր առիթ դարձան նկատողութիւնների: Թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ, հարցը պարզվեց, դարձաւ սկզբունքի խնդիր: «Արդեօք իրաւունք ունի խորհուրդը ժողովի հաստատած նախահաշվից դուրս ծախսեր անելու, թէ ոչ»: Այս շատ պարզ և հիմնաւոր հարցին փոխանակ ուղղակի պատասխանելու, հազար ու մի վարիացիաներ մէջ բերին, հարցը խճճեցին և նոյն իսկ պատի խնդիր դարձրին: Հակաճառութիւնը տևեց ամբողջ ժամեր:

Վերջապէս՝ նախագահը դիմեց քուէարկութեան. նա առաջարկեց, որ խորհրդի գործունէութեան և մանաւանդ արված ծախսերի համամիտները նստած մնան իրանց տեղերում, իսկ անհամաձայնները՝ ոտի կանգնեն: Ոչ ոք տեղից չը շարժվեց, և հարցը լուծված համարվեց... Ոտի չը կանգնեցին և այն անհատները, որոնք ակնյայտնի բողոքում էին նախահաշվից դուրս ծախսեր անելու վերաբերեալ: Անկասկած, հարցը այլ վէճ կը գտնէր, եթէ գաղտնի քուէարկութիւն լինէր: Այդպիսի դէպքեր շատ են տեղի ունեցել անցեալ ժողովներում: Այս և այն կերպով նկատողութիւններ են անում, ծուռ ու մուռ ճանապարհներով դժգոհութիւն են յայտնում և կասկածներ յարուցանում, բայց երբ բանը հասնում է երես առ երես խօսելուն, անկեղծութեան և բացարձակ քուէարկութեան, ոչ ոք «վատամարդ» չէ ուզում լինել...

Վերոյիշեալ հարցը լուծված համարելուց յետոյ, ժողովը քննութեան առաւ վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը՝ Բալախանիի հիւանդանոցի տարտամ դրութեան մասին: Ինչպէս նախընթաց նամակում յիշել էինք, վերաստուգող յանձնաժողովը Բալախանիի հիւանդանոցը նկարագրեց շատ վատ գոյներով, այն աստիճան, որ նոյն իսկ նպատակայարմար էր դտնում փակել այդ հիւանդանոցը, քան թէ պահել այդ դրութեան մէջ: Խորհրդի անդամներից ոմանք, բաղուի շրջանի ինժեներների ուղեկցութեամբ, հետեւեալ օրը գնում են՝ անձամբ ստուգելու հիւանդանոցի անմխիթար կացութիւնը: Եւ, ահ, զարմանք: Հիւանդանոցը միանգամայն հակառակ դրութեան մէջ են գտնում. ամեն ինչ կարգին, մաքուր և գոհացուցիչ... Միակ անյարմարութիւնը նկատում են չինութեան մէջ, որը նորութիւն չէ. վաղուց այդ մասին խօսք է եղել և միջոցներ են ձեռք առել նոր, սեփական և յարմար չինութիւն ունենալու: Վերաստուգող յանձնաժողովը չը ցանկացաւ հակառակել, կարծես մի աներևոյթ ոյժ կաչկանդում էր նրան. նա չը փորձեց նոյն իսկ պնդելու իր նախընթաց օրվայ ասածների վրա... Նա միայն յայտնեց իր գոհունակութիւնը, որ կարողացել է հետաքրքրութիւն շարժել, ուշադրութիւն դրաւել դէպի հիւանդանոցը: Յանձնաժողովի երէկ և այսօր բռնած դիրքը նոյն խնդրի վերաբերեալ աւելի քան զարմանալի էր: Սակայն մի բան, որ գաղտնի չը մնաց՝ այդ այն էր, որ յանձնաժողովի անդամները ոչ մի յետին միտք չեն ունեցել, չարամտութեամբ չեն յօրինել իրանց ասածները. նրանք անաչառութեամբ նկարագրել են այն, ինչ որ տեսել են, ինչ դրութեան մէջ որ գտել են հիւանդանոցը...

Ն. Դաւթեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

«Ներևոյթ հողագործ»—թարգմ. Լևոն Մելիք-Ադամեան: Թիֆլիս, 1896.

Դարվինի աշխարհահռչակ գիտական աշխատութիւնները կարելի է ժողովրդականացնել, միանգամայն հասկանալի դարձնել հասարակ ընթերցողների համար: Ապացոյց—այս գրքոյկը, որ պատմում է թէ ընութեան մէջ ինչ մեծ, խորհրդաւոր դեր է կատարում կարմիր ճիճուն: Հող հերկող, հողին արգասաւորող յատկութիւններ առնող այս մոռացված, զզուանքի առարկայ դարձած արարածի կենսագրութիւնը այնքան սիրուն կերպով է պատմված, որ կարդացվում է մեծ հետաքրքրութեամբ: Ոչը թեթև, լեզուն պարզ, պատմողը այնպիսի տաք սիրով՝ է վերաբերվում դէպի մարդկութեան բարերար ճիճուն, որ անհնարին է մոռանալ նրան: Բնութեան ստեղծագործող գաղտնի հրաշալիքներից մէկն էլ պարզվեց հայ ընթերցողի առաջ: Հրատարակչական ընկերութեան «Գիտական գրադարանի» մէջ այս գրքոյկը լաւ տեղ պիտի բռնէ: Նա կարող է ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է գիտութիւնը ժողովրդականացնել, ինչ լեզուով և ինչ ոճով պէտք է պատմել ժողովրդին տիեզերահռչակ գիտնականների գործերը: Մեզ մնում է ցանկալ, որ այսպիսի սիրուն, օգտակար գրքերի թիւը օրէցօր մեծանայ:

Թարգմանութիւնը կատարված է բարեխղճութեամբ, սահուն, հասկանալի լեզուով: Թարգ-

---

ի և անչարժութեան ժամանված Պարսկաստանի մէջ: Նասրէդդին Շահը չատ լաւ հասկացաւ, որ երկրի մէջ եւրոպական հաստատութիւններ կարելի է մտցնել և առաջ տանել միայն եւրոպացիների ձեռքով, նրանց ղեկավարութեամբ: Այդ պատճառով նա հրաւիրեց Պարսկաստան զանազան գերմանական, աւստրիական, ֆրանսիական, ռուս՝ քաղաքացիական և զինուորական պաշտօնեաներ, ուսուցիչներ, որոնք կարճ ժամանակում կազմակերպեցին զօրք, արտիլէրիա, պօստային—հեռագրական վարչութիւն, մաքսային վարչութիւն, հաստատեցին մի քանի զինուորական և բժշկական դպրոցներ, ստեղծեցին եւրոպական ձևով՝ ոստիկանութիւն, ժանդարմերիա և այլն: Մի ժամանակ Շահը մինչև անգամ փորձեց հրատարակել թանզիմաթ (սահմանադրութիւն), սահմանեց կալուածական, դրոշմական տուրք, բայց որովհետև այդ նորմուծութիւնը, ինչպէս և ծխախոտի մենաւաճառութեան, կամ ըէժիի հաստատելը սաստիկ ընդդիմադրութեան հանդիպեց հոգևորականութեան կողմից և ժողովրդական մեծ խռովութիւններ պէտք է ծագէին, ուստի Շահը չուտով ձեռք քաշեց այդ տեսակ ռէֆորմներից: Առհասարակ Նասրէդդին Շահը հեշտութեամբ էր տալիս եւրոպացիներին զանազան կոնցէսիաներ և արտօնութիւններ, մանաւանդ որ այդ կոնցէսիաները և արտօնութիւնները հարստացնում էին խաղինան (գանձարանը), իսկ Նասրէդդին Շահի գլխաւոր թուլութիւնն էր՝—դիզել դեղին ոսկիներ, և ոչ մի Շահ այնքան պատրաստ և կանխիկ ոսկի դրամ չունէր, ինչքան նա:

Նա սիրում էր և գեղարուեստն ու գրականութիւնը: Նա հիմնեց Թէհրանում մի գեղեցիկ մուզէօն, որտեղ ժողովեց թանկագին և հաղուագուտ առարկաներ, գլխաւորապէս գոհարեղէն: Նրա գլխաւոր ոսկերչապետը—աղա Ծերունի Մասէհեանը՝ չինեց նրա համար մի երկրագունտ, որն այդ մուզէօնի զարդն է կազմում: Այդ երկրագնդի վրա՝ գետերի հոսանքը գծագրված է չափիւղայով, ովկիանոսները—զմրուխտներով, լեռնաշղթաները—յակինթներով, իսկ աշխարհի մասերը—այլ թանկագին քարերով: Պարսկաստանը, իբրև երկրագնդի կենտրոն, նշանակված է սիսեռի մեծութեամբ սօլիտէրներով, իսկ Թէհրան մայրաքաղաքը—ընկոյզի մեծութեամբ մի ադամանդով: Այդ երկրագունդը արժէ մօտ 5 միլիոն ռուբլի: Նասրէդդին Շահը խրախուսում էր և գրականութիւնը. նա կամենում էր ստեղծել պարսկական նոր գրականութիւն. թարգմանել էր տալիս եւրոպական զանազան հեղինակութիւններ, կազմել էր տալիս զանազան դասագրքեր և ինքն ևս սիրում էր գրել բանաստեղծութիւններ: Նա գրել է և իր թէ Եւրոպայում, թէ Պարսկաստանում կատարած բոլոր ճանապարհորդութիւնների պատմութիւնը: Նրա նախաձեռնութեամբ սկսեցին հրատարակվել մի քանի լրագիրներ, որոնց մէջ պաշտօնական «Իրան» լրագիրը մինչև այժմս էլ շարունակվում է: Վերջապէս նա չը մոռացաւ հիմնել Թէհրանում և թատրոն, որտեղ, սակայն, կանանց դերերը կատարում են տղամարդիկ՝ կանանց հագուստով:

Պէտք է նկատենք սակայն, որ Շահի վերանորոգչական գործունէութիւնը իր թագաւորութեան վերջին տարիներում սկսեց թուլանալ և այդ բանի մէջ յանցաւոր են իրանք եւրոպացիները, որոնք սկսեցին ցոյց տալ զիշատիչ հակումներ և նպատակ դրին իրանց համար անտեսականապէս ճնշել, ստրկացնել երկիրը: Շահը նկատեց, որ եւրոպացիները կուլտուրական շարժառիթներով չեն ղեկավարվում, այլ լոկ շահադիտական. դիզել հարստութիւն, ծծել Պարսկաստանի հիմը,—ահա եւրոպացիների գլխաւոր նպատակը: Միակ եւրոպական հաստատութիւնները, որոնք հոգս են տանում փոքր ի չատէ ուսում և կրթութիւն տարածել—կաթոլիկ և բողոքական միսիոնարական հաստատութիւններն են, որոնց Շահը մեծ արտօնութիւններ է տուել իր երկրում, թէև պարսիկ ժողովուրդը չատ հեռու է պահում իրան այդ հաստատութիւններից և միայն հայերն ու ասորիներն են, որոնք լցնում են միսիոնարների դպրոցները և յաճախում նրանց եկեղեցիները:

Գալով արտաքին քաղաքականութեան, պէտք է ասել, որ Նասրէդդին Շահը իր երկրի առաջին քաղաքագէտն էր և նրանից աւելի հին դիպլոմատ չը կար Պարսկաստանում: Լաւ հասկանալով, որ Պարսկաստանում ընդհարվում են անգլիական և ռուսական շահերը, նա մեծ ճարպիկութեամբ նաւարկում էր այդ շահերին դիպչող ժայռերի միջից և կարողանում էր հաւասարակշռութիւն պահել և որ և է մէկին չը տալ տիրապետող ու դերակշիռ ազդեցութիւն:

Իր թագաւորութեան վերջին տարիներում, սկսած 1889 թվից, եւրոպայի ճանապարհորդութիւնից յետոյ, Նասրէդդին Շահը երկրի կառավարութիւնը բոլորովին թողել էր իր առաջին մինիստր Միրզա-Ալի-Ասղեր-Խան սադր-ազամին և, իսկապէս, վերջինս էր ամեն բան կարգադրում ու անօրինում:

—

Նախ քան վերջացնելը, աւելորդ չէ մի քանի խօսք ասել, թէ ինչի նոր Շահը, Մուզաֆֆեր-Էդդինը դեռ մինչև այսօր չէ տօնում պաշտօնապէս իր դահակալութիւնը, կամ, ինչպէս կոչում են պարսիկները, ջլուսը, չը նայելով որ նա, նոյն իսկ Նասրէդդին Շահի սպանութեան օրը, ապրիլի 19-ին, հրատարակվել է Իրանի Շահնշահ: Դրա պատճառն այն է, որ պարսկական հին սովորութեան համաձայն, պաշտօնական դահակալութիւնը համարվում է այն օրը, երբ Շահը կը նստի Նաղիր-Շահի Հնդկաստանից բերած մեծ գահի վրա և կը զարդարի իրան այն թանկագին զարդերով ու գոհարներով, որոնցով հռչակաւոր է Պարսկաստանի արքայական գանձարանը:

Դահակալութիւնը կը հաչի պաշտօնապէս այն օրից, երբ նոր Շահը կը հասնի Թէհրան և այդ գահի վրա նստելով, սալամի հանդէսը կը կատարի: Նոր Շահի առաջին պարտաւորութիւնը պէտք է լինի ամփոփել իր հօր՝ Նասրէդդին Շահի մարմինը կամ Շահաբդուլազիմի մզկիթի մէջ, կամ Ղում քաղաքի դամբարանում, որտեղ սովորաբար թաղվում են Պարսկաստանի թագաւորները, Սէֆէվեան հարստութիւնից սկսած:

Տ.

մանիչը չէ սարկացել ընագրի առաջ, այլ կատարել է իր գործը բոլորովին անկախ, ինչպէս մի մարդ, որ պատմելու սեփական հնարքն ունի: Մասնաւոր թերութիւնները ներելի են այդպիսի աշխատութեան մէջ: Մենք ընդունում ենք, որ այդպիսի թարգմանութիւնը օրինակելի կարող է համարվել բառարանների սարուկ մեքենայական թարգմանիչների համար:

II

«Սոխակ Հայաստանի»—հատ. I. հրատար. Գրիգոր քահ. Գրիգորեանցի: Մոսկվա, 1896.

Այս գրքի մասին մեր ասելիքը կարճ կը լինի: Նայելով նրա վրա լոկ իբրև մի երգարանի վրա, մենք նշանակում ենք թերութիւնները: 1) Պէտք է դնել միմիայն յայտնի, լաւ աջողված բանաստեղծութիւնները, որոնք երգվում են. զանազան անյայտ հեղինակների «ոտանաւորութիւնները» բոլորովին աւելորդ բեռն են. դրանց մէջ են, ի հարկէ, և հրատարակչի բոլորովին անաջող ոտանաւորները: 2) Հրատարակչի անհամ ծանօթութիւնները պէտք է խնայեն ընթերցողին. դրա համար պէտք է կրճատել զանազան «աւաղներից», «ոհերից» և այլ այսպիսի բացականչութիւններից բաղկացած ծանօթութիւնները, որոնք վերաբերվում են անցքերին, մարդկանց. իսպառ վերացնել այն ծանօթութիւնները, որոնք Գրիգորեան քահանայի կենսագրութեան են վերաբերվում և որոնք պէտք է հասկացնեն երգողներին, թէ երբ և ինչ հեռագիր է ուղարկել հրատարակիչը, ինչ ճառ է ասել, ինչ է մտածել այս ինչ թուականին: 3) «Լիակատար երգարան» անունով զարդարված մի գրքում տեղ չունեն արձակ գրուածքներ, որքան և հրատարակչի համար անհրաժեշտ լինեն նրանք՝ կամ իբրև անձնական նամակներ, կամ թէ իբրև լրագրական յօդուածներ:

Այսքանը:

Լ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 1-ին

Ցաւանի է, որ մեր XIX դարու սկզբին, մանաւանդ միջին, բոլորը լաւ կարծիք ունէին այս դարի մասին. լուսաւորութեան և աղատութեան դար էին անուանում, յետոյ այդ դարը եղաւ չոզիի և ելեքտրական զօրութեան դար: Ջէ, ջղային և այլասերման դար բացականչում են այժմ: Իսկ մեզ՝ ասիացիներիս համար իսկապէս այս դարը քսու ինսինուացիների դար է...

Ով մեզ չէ հաւատում, թող ուշի ուշով հետեւէ մեր հասարակական գործերին և կը համոզվի նա, որ մեր ասածը—զուտ ճշմարտութիւն է: Օրինակի համար, Նոր-Նախիջևանի մէջ 35 տարի է գոյութիւն ունի կառավարութիւնից հաստատված մի համակրելի ընկերութիւն՝ Բարեգործական ընկերութիւն. թէպէտ անդամների թիւը հասնում է 300—400-ի, սակայն ընդհանուր ժողովին ներկայ էին լինում միայն 40—50 հոգի, ուստի և ղեկավարներ էին ընտրվում այնպիսի անբարեխիղճ անդամներ, որոնք բարեգործական իդէայից հեռու են հազար մղոններով. միայն նրանց մէջ եան էր խօսում, սրբութիւն—ոչինչ. լոկ անձնական խնդիր էր դրանց համար ընկերութիւնը: Քսան տարի Խ. Ստեփանոսեանը ընկերութեան նախագահ էր, և համարեա այդքան ժամանակ Ս. Ցարութիւնովը ընթացիկ գործերը վարող անդամ: Բոլորը հասկանում էին, որ ընկերութիւնը չէ կարելի թողնել դրանց ձեռքերում, քանի որ դրանով ընկերութիւնը կորցնում է ժողովրդի առաջ իր յարգը և վարկը, հասկանում էին, բայց և այնպէս համբերում էին այդ ղեկավարողներին:

Այս տարի ժողովին ներկայ էին 90 անդամներ. պարոններ Ցարութիւնովը և Ստեփանոսեանը չը կարողացան մնալ ղեկավարողներ. ընտրվեցին նոր ոյժեր: Եւ ահա այդ իսկ բօսլեից այդ պարոնները Բարեգործական ընկերութեան ամենակատաղի թշնամիները հանդիսացան. այժմ թող ընկերութիւնը կորչի, ոչնչանայ, ինչ փոյթ. ինչ փոյթ, երբ պ. Ստեփանոսեանը չէ նախագահ, իսկ պ. Ցարութիւնովը ընթացիկ գործերը վարող չէ: Եւ ահա պ. Ցարութիւնովը՝ պ. Ցարութիւնովի «Пр. Край» լրագրում գովում է Ցարութիւնովին և Ստեփանոսեանին և ոչ մի ինսինուացիայի, բամբասանքի առաջ չէ կանգնում, որպէս զի վնասի ընկերութեանը... Հին աչուղի հետ մենք կասենք այդ երկու պարոններին՝

Մէ փիքր արա, ինչ կուտանիս փուչ աչխարիցը,
Վերջը մահ է, ցէրը պահէ չար մեղքերիցը:

Գր. Զալխուչեան

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՒՑ

—

Ապրիլի 27-ին

Ապրիլի 23-ին մի աղետալի դէպք պատահեց այստեղ. գիւղի գետը, որը գարնան ամիսներին իր մեծաքանակ ջրով, սրընթաց հոսանքով և հոսանքի հետ չարժվող քարերով ահռելի կերպարանք է ստանում, մի զոհ ևս տարաւ (խեղդվողն է Շ. Ու—եանի կինը): Վերջին ութ տարվայ ընթացքում այդ գետը եօթ մարդ է սպանել: Մեղրիի գետը, իր կատաղի հոսանքի պատճառով, ոչ մի հաստատ գետաեղ չունենալով, վարելահողերի համարեա կէսը ողողել, տարել է և այդպիսով անտեսական ճգնաժամ առաջացրել այստեղ: Դրա հետ միասին նա տարեկան մի մարդ է խեղդում: Որ գետի աւերումների դէմ անկարելի է կուռել, այդ պարզ է: Բայց ինչ որ վերաբերվում է վերջին տեսակ դէպքերին, դրա առաջը կարելի է առնել: Դրանցում մեղաւոր են գիւղացիք իրանց վերին աստիճանի անտարբեր և անփոյթ վերաբերմունքով: Պէտք է նրկատել, որ վերջին զոհի հետ միասին նախորդներն էլ գետն են ընկել միչտ կամուրջից՝ կամուրջների խարխուլ լինելու պատճառով: Ամուր և չէն պահել կամուրջները—դա չատ հեչտ բան է գիւղացու համար: Այդ նպատակը պահանջում է ամսական ամենապակասը մի անգամ գնալ, դիտել կամուրջները (որ տանուտէրի գործն է) և փլված մասերը վերանորոգել, այն ինչ, մեր կամուրջները ամբողջ տարին մնում են աւերակ և անխնամ զրութեան մէջ: Այդ նոյն պատճառով մարդկանց հետ միասին քանի քանի բեռնված դրասներ են ընկել գետի մէջ...

Ամսիս 20-ին այստեղ էր Զանգեզուրի գաւառապետ Սէլիմբէգ Բուստամբէգովը: Նա տանուտէրական ընտրութիւն կատարեց, ծանօթացաւ տեղական կեանքի պայմանների և գիւղացիների տնտեսական դրութեան հետ և մի քանի օգտակար խոստումներ արաւ: Ցանկալի է, որ Զանգեզուրի նման տեղերում գաւառապետները տեղացիներ լինեն: Նախ որ տեղացին աւելի լաւ կը հասկանայ ժողովրդի կեանքն ու նրա կարիքները և երկրորդ՝ տեղացի գաւառապետները ունեն այն արժանաւորութիւնը, որ նրանք անձամբ կարող են խօսել ժողովրդի հետ նրանց գանգատների կամ ցաւերի մասին և ոչ թէ զանազան թարգմանների միջոցով, որոնք կօսէկների համար՝ յեղաշրջում են ամեն բան, ոտքի տակ են տալիս ճշմարտութիւնը և մարդկանց անները աւերում:

Ա. Աղէլեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մայիսի 8-ին

Անցեալ տարի, երբ Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը հրատարակեց, որ ի պատիւ Այտընեանի ձեռնարկել է ձեռագիրների ցուցակի հրատարակութեան, Կովկասի զանազան քաղաքներից, իմ միջոցով, 38 հոգի և հիմնարկութիւն բաժանորդ գրվեցին: Այդ ձեռագիրների ցուցակը թէև պէտք է հրատարակվեր նոյեմբերի 1-ին, բայց մինչև այսօր նրա լոյս չը տեսնելու պատճառն այն է, որ գրքի ծաւալը որոշվածից գրեթէ երկու անգամ մեծ պէտք է լինի, նիւթերի շատութեան պատճառով: Ինչպէս յայտնել է ինձ նամակով հայր Գրիգորիս Գալէմքէրեան, գիրքը լոյս կը տեսնի այս ամսի վերջին:

Բաժանորդների տեղեկութեան համար հարկաւոր եմ համարում յայտնել այդ հանգամանքը, կցելով որ նրանց անունները արդէն տպագրված են «Հանդէս Ամսօրեայի» անցեալ տարվայ հոկտեմբերի և նոյեմբերի համարներում:

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բաթում, ապրիլի 28-ին

Թոյլ տուէք այս երկտողով հրապարակական շնորհակալութիւն յայտնել բժիշկ Միրիմանեանին, որ յանձն առաւ 1895/96 ուսումնական տարվայ ընթացքում անվարձ յաճախել մեր դպրոցը և պէտք եղած ժամանակն էլ բժշկական օգնութիւն հասցնել թէ դեղով և թէ խորհրդով:

Աւագ ուսուցիչ՝ Ա. Տէր-Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի քանի լրագիրներ արդարացի բողոք են բարձրացրել «Ռուսաց հեռագրական գործակալութեան» դէմ: Այդ գործակալութիւնը բաւական չէ, որ չարդարացրեց իր վրա դրած յոյսերը՝ մատակարարելով ամբողջ Ռուսաստանի մամուլին անհետաքրքրական հեռագրալուրեր, ոչ միայն դժգոհութիւն յարուցեց մամուլի մէջ անդադար բեկլամներ անելով գործակալութեան դիրեկտորներին՝ Սուվորինին, Նօսովիչին և Կոմարովին ու նրանց լրագիրների համար,—այլ և ցոյց տուեց մի այնպիսի չահասիրական ոգի, որ ներել չէ կարելի: Թագադրութեան առիթով գործակալութիւնը բոլոր լրագիրներից աւելորդ փող է պահանջում, որովհետև մի փոքր երկար հեռագիրներ պէտք է հաղորդի: Հարցնում ենք. ուրեմն ինչ միաբ ունի կնքված պայմանը, եթէ հարկաւոր ժամանակը գործակալութիւնը պէտք է աւելացնի վճարը և զանազան վերադիրներ անի: Գործակալութեան այդ վարմունքի դէմ մի քանի լրագիրներ գանգատ են տուել դատարանին:

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ աշնան Թիֆլիսում տեղի կունենայ կաթնատնտեսական ցուցահանդէս: Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը իր վերջին նիստում, քննելով ցուցահանդէսին վերաբերեալ խնդիրները, եկաւ այն եզրակացութեան, որ բացի կաթնային արդիւնքներից, կարող են հանդէս բերվել զանազան գործիքներ, որոնք գործադրվում են թէ տեղական ձևի կաթնատնտեսութեան և թէ նոր եւրոպական արդիւնագործութեան մէջ: Ցուցահանդէսը պէտք է տեղի ունենայ Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ:

—

Մեր երիտասարդ հայագէտ Գր. Խալաթեան, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը, մայիսի 5-ին, Պետերբուրգի համալսարանում պիտի պաշտպանէր հրապարակական կերպով իր դիսսերտացիան «Հայկական էպոսը Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան մէջ» վերնագրով: Այդ դիսսերտացիան նա ներկայացրել է հայկական գրականութեան մագիստրոսի աստիճանը ստանալու համար: Այդ աշխատութեան մասին մեր ընթերցողներին կը տանք մի մանրամասն տեղեկութիւն:

—

Մենք ստացանք մի ընդարձակ աշխատութիւն գերմաներէն լեզուով կաթնատնտեսական գործիքների մասին, որ պատկանում է նշանաւոր մասնագէտ Բենսօ-Մարտինիի գրչին և կրում է հետեւեալ վերնագիրը՝ «Kirne und Tirbe, ein Beitrag zur Kulturgeschichte». Այդ աշխատութեան մէջ ներկայացրված են իւղագործութեան վերաբերեալ գործիքները բոլոր ազգերի մէջ, սկսած Ամերիկայի վայրենիներից մինչև եւրոպական ամենանոր կատարելագործութիւնները: Գրքի մէջ տեղ են գտել և կովկասեան կաթնատնտեսութեան գործիքները:

—

Ընթերցողները գուցէ յիշում են, որ բժշկապետ Ս. Ցարութիւնեան մասնակցում էր Պետերբուրգի քաղաքային դումայի նիստերին, իբրև հայոց եկեղեցու կողմից ներկայացուցիչ: Սենատի կարգադրութեամբ, պ. Ցարութիւնեան, որ ահա երեք տարի է, ինչ մասնակցում է Պետերբուրգի քաղաքային ինքնավարութեան գործերում, այլ ևս ձայնաւոր չը պիտի լինի: Սենատը բացատրեց, որ հոգևորականութեան կողմից պէտք է լինի միայն մի պատգամաւոր, որպիսին պէտք է ճանաչվի միայն ուղղափառ եկեղեցու պատգամաւորը:

—

Մայիսի 11-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի շինութեան մէջ կը կայանայ Կովկասեան իրաւագիտական ընկերութեան նիստը, որտեղ կը կարդացվեն հետեւեալ բէֆերատները. 1) «Կնոջ իրաւագիտական վիճակը. ամուսինների միասին ապրելու հարցը ռուսաց օրէնքների համաձայն», կը կարդայ ընկերութեան քարտուղար Գրուզէնբերգ. 2) «Նօտարական կարգադրութեան մասին», կը կարդայ Գրիգորիեվ: Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք:

—

Պետերբուրգի «Новости» և «Новое Время» լրագիրները, իրանց մայիսի 2-ի համարներում մի-մի համակրական յօդուած են նուիրել հանգուցեալ Գասպար Եաղուբեանին:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը որոշել է հիմնել Կարս քաղաքում արդիւնագործական ուսումնարան: Կարսի նահանգապետը այդ ուսումնարանի վերաբերութեամբ ստացել է հետեւեալ հարցերը. որ արհեստները աւելի համապատասխան են տեղական պահանջներին. արդեօք քաղաքը կամ նահանգը չեն կարող մասնակցել ծախքերի մէջ. չը կան արդեօք պատրաստի արքունական պարապ շինութիւններ այդ նպատակին ծառայեցնելու համար, կամ մասնաւոր յարմար տներ վարձելու համար:

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Մայիսի 5-ին տեղի ունեցաւ քաղաքային դումայի մնացած 9 ձայնաւորների ընտրութիւնը: Թէև հայերը առաջարկել էին թուրքերին՝ ընտրել այդ 9 հոգին բացառապէս թուրքերից, բայց սրանք չը համաձայնվեցին քուէտուփ դնել: Ընտրողների թիւը այս անգամ 88 էր: Ընտրվեցին՝ Կարապետ Շիրանց, Եփրեմ Գասպարեանց, Յովակիմ Բէջանեանց, Բաղդասար Նարինեանց, Ալէքսան-Բէգ Զուրաբեանց, Աւագ Մուղդուսի Յակոբեանց, Դաւիթ Ներսէսեանց, Կոստանդ Պետրոսեանց և Իւան Դաւթեանց: Այսպիսով մեր ապագայ դումայի մէջ թուրքերից միայն 5 ձայնաւոր կը լինեն:»

—

ՍԱՐԻԳԱՄԻՇԻՑ մեզ գրում են. «Նոցա Կայսերական Մեծութիւնների թագադրութեան հանդէսների օրը թիւրքաց Հայաստանի գաղթականներին ձրի ճաշ պիտի տրվի տեղական հասարակութեան կողմից: Դրա համար ընտրված են կարգադրիչներ՝ Կ. Խաչեանց, Մ. Բայատեանց, Ս. Խանամիրեանց և Ս. Մավրապուլի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մարկիզ Սալսբերին, մայիսի 8-ին, լորդերի պալատում, պատասխանելով լորդ Սամմրօրի հարցաքննութիւններին, ասաց ի միջի այլոց հետեւեալը: «Զէյթունի կառավարչի վերաբերութեամբ պէտք է յայտնեմ, որ ապրիլի 15-ին լոյս տեսած թիւրք լրագիրներում հրատարակված էր, թէ Զէյթունի կառավարիչ է նշանակված մուսուլման Մահմադբէյը: Կ. Պոլսի բրիտանական, ֆրանսիական և ռուսական դեսպանները իսկոյն բողոքեցին Բ. Դրան այդ վարմունքի դէմ, և յոյս յայտնեցին, որ եղած կարգադրութիւնը կը վերացվի: Ապրիլի 19-ին Թիւրքիայի արտաքին գործերի մինիստրին արվեցին նոր առաջադրութիւններ, որին մասնակցեցին բոլոր վեց պետութիւնների ներկայացուցիչները, սակայն Դուռը մինչև այժմ ոչ մի պատասխան չէ տուել: Այսօր մեզ տեղեկացնում է Ֆիլիպ Կէրրի, որ դեսպանները վճռել են չուտով հաւաքվել խորհրդակցելու՝ թէ ինչ եղանակով պէտք է նրանք պաշտպանեն իրանց առաջադրութիւնները:

«Հայերին բռնի մահմեդականացնելու խնդրի վերաբերութեամբ՝ արդէն յայտնի պէտք է լինի ձեզ՝ հրատարակված Կապույտ գրքերից, որ այդ առարկայի վրա անգլիական կառավարութիւնը դարձրել է իր առանձին ուշադրութիւնը: Այդ այն հարցերից մէկն է, որի վերաբերութեամբ մենք չատ լուրջ կերպով պնդել ենք մեր դաշնակիցներին և յատկապէս Ռուսաստանին: Այդ խնդիրը յուզում է մեր ժողովրդի զգացմունքները և կարծում եմ ուրիշ երկիրներում դա աւելի խիստ կերպով կազդի, քան թէ ուրիշ սարսափելի սճիրներ, որոնք կատարվեցին Հայաստանում: Այժմ այդ խնդիրը քննվում է Կ. Պոլսի դեսպանների շրջանում, որոնք միջոցներ են որոնում կրօնափոխութեան առաջն առնելու և վերադարձողներին սպառնալիքներից ազատ պահելու համար:»

—

Զմիւռնիայի և Կասպալայի մէջ տիրող երկաթուղու գծի վրա, Աշխեգեր գիւղի մօտ մեծ ընդհարում է տեղի ունեցել քիւրդ և հայ 400 բանւորների մէջ: Սեռածների և վիրաւորվածների թիւը մեծ է:

—

Բէյռէրի գործակալութիւնը հաղորդում է. «Անգլիական պարլամէնտում, արտաքին գործերի մինիստրի օգնական կէրզօն հաղորդեց, թէ պարլամէնտին կը ներկայացնվի Զմիւռնիայի փոխհիւպատոս Ֆիճ-Մորիսի զեկուցագիրը Բէրէճիկում և Ուրֆայում տեղի ունեցած կոտորածների մասին: Այդ զեկուցագրից երևում է, որ տեղական իշխանութիւնները ոչ միայն ոչինչ չեն արել հայերին պաշպանելու կամ բռնաբարութիւնների առաջն առնելու համար, այլ թէ Ուրֆայի երկրորդ կոտորածի ժամանակ թիւրքաց զօրքը նոյն իսկ եռանդուն մասնակցութիւն է ունեցել»:

—

«Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ 1,200 հայերի կալանաւորութիւնը հետևանք էր մասնութեան, որպէս թէ հայերը զէնք ունեն: Կալանաւորվածներին հարցաքննութիւն անելուց յետոյ արձակեցին:

—

Վանից մեզ գրում են, ապրիլի 24-ից. «Տեղս կատարեալ կերպով բացուած է գարուն, բայց ոչ մի տեղ սկսած չէ դաշտային աշխատութիւն. թիւրքերն իսկ բօսատան դրած չեն, մինչդեռ առոր ժամանակը կանցնի:

«Երկրի ընդհանուր անապահովութիւնը նոյնութեամբ կը շարունակուի: Գիւղերու մէջ և քաղաքի շրջակայքն իսկ աւարառութիւններ և սպանութիւններ միշտ կան ու կան: Կայսերական քննիչներէն մին վաղ մը զօրքով գիւղերը գացեր է քիւրդեր զսպելու անունով...»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս 22 ապրիլի

Եւ ոչ իսկ եւրոպական վարչութիւն մը կրնայ ազատ մնալ ապականութիւններէ, երբ կը գործէ թրքական անբարոյականացուցիչ մթնոլորտին մէջ, նեխած, մօրացած ճախճախուտ մը, ուր ապրել սիրողները պէտք է վերջին ծայր առողջ կազմութիւն և նկարագիր ունենան, դիմադրելու համար զարհուրելի համաճարակներուն: Ապահովաբար, Թիւրքիոյ Հանրային Պարտքի վարչութեան վարիչները չեն որ պիտի կըրնան յաւակնիլ իրենց առաքինութիւններուն վրա. ազնիւ զգացումները գոյութիւն չունեն այս մարդոց համար, որոնք քայքայող պետութեան մը բեկորներէն որչափ կարելի է շատ կողոպուտ հաւաքելու տխուր արհեստին տուած են իրենք-զիրենք: Մարաշի մէջ պատահած դէպքի մը առթիւ Հանրային Պարտքի վարչութեան ունեցած ընթացքը պայծառ ապացոյց մըն է մեր ըսածին: Կոտորածներուն ատեն վարչութեան Մարաշի ճիւղին տնօրէնը, որ թուրք մըն է, 17 տարեկան հայ աղջիկ մը առևանգելով իր տունը կը տանի: Ասկէ 8-10 օր առաջ այստեղի վարչութիւնը իմանալով խնդիրը, փոխանակ անմիջապէս պաշտօնակ ընելու առևանգիչ թիւրքը, հեռագրով կը հրամայէ որ աղջիկը ծնողներուն վերադարձուի: Թիւրքը կը պատասխանէ թէ չի կրնար, որովհետև աղջիկը իսլամութիւնը ընդունած է արդէն և այլ ևս իսլամ հասարակութեան պատկանելուն՝ թիւրքի մը տունը պիտի ղրկէ: Կարծելով թէ իր պարտականութիւնը կատարած լմնցուցած է, Հանրային Պարտքի վարչութիւնը այսքանով գոհացաւ:

Լրագիրներում տպված է. «Գարաքէօյի ոճիրը.—Ղալաթիոյ Գարաքէօյ Եէնի խանի առջև՝ ոստիկան խալիլ էֆէնտիի սպանման գործի համար ձերբակալուած Կարապետ ու Լեւոն անուն անձանց և ընկերներուն նկատմամբ կատարուած նախնական քննութիւնք աւարտեցան և տեղեկագիրները յանձնուեցան Ամբաստանիչ ատենին:»

Թուրք լրագրաց այս օրուան թուոյն մէջ հրատարակուած է ձերբակալման հետևեալ հրամանագիրը: «Հետևեալ անձինք ամբաստանուած են թէ Ղալաթիոյ Եէնի խանը 11 թիւ սենեակը բնակող վաճառական Շահպազ էֆէնդիի սպառնական նամակ ղրկելով անկից ստակ պահանջելու ատեն բէվոլվերի կապարով սպանված են ոստիկան խալիլ էֆէնտին՝ իր պաշտօնի կիրառմանը պահուն: Այդ անձինք փախած են: Առաջինը՝ Սմբատ՝ միջին հասակ ունի, դէմքը ծաղկաւեր ու դեղնորակ, դեղին քիչ պեխով, մէջտեղը թափած, քիթին վրա վերք մը և ծաւի աչքերով: Երկրորդը՝ Մարտիրոս՝ միջին հասակով, դեղին դէմքով, դեղին ու ցից պեխերով և ծաւի աչքերով: Կատարուած քննութեամբ և ձեռք բերուած ապացոյցներով հաստատուած է, թէ ադոնք այդ արարքին հեղինակներն են և իրենց արարքը կը համապատասխանէ Պատժական օրինաց 58-րդ յօդուածի յաւելուածին տրամադրած ոճրագործութեանց: Ասոնք իբրև ոճրագործ ամբաստանուած են Եղեռնադատ ատենին առջև դատուելու համար՝ ըստ տրամադրութեան Պատժական Դատավարութեան օրինաց մասնաւոր յօդուածներուն: Կ. Պոլսոյ ամբաստանիչ ատեանը ներկայ ձերբակալման հրամանագիրը պատրաստած է ի գիտութիւն դատական-ոստիկանական պաշտօնէից, որպէս զի այդ անձերն ուր որ տեսնեն, ձերբակալելով յանձնեն նոյն դատարանին բանտը:»

Պ—ի

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 6 մայիսի: Թագաւոր Կայսրը հրամայեց, որ հանդիսաւոր մուտքը Մոսկվա տեղի ունենայ հինգշաբթի, մայիսի 9-ին, կէսօրից յետոյ $2^1/_2$ ժամին:

Այսօր Մոսկվա ժամանեցին Պրուսական Հէնրիխ պրինցը և Օլդենբուրգեան թագաժառանգ մեծ դուքսը:

Այսօր ամբողջ Մոսկվայի ժողովուրդը, չը նայելով անձրևին, լցվել էր փողոցները և ամբողջ ժամեր կանգնած էր սպասելով միաբերան, ոգևորված «ուրայով» ողջունել սիրեցեալ Միապետին: Ամբողջ ճանապարհը Սմոլենսկի կայարանից մինչև Պետրովսկի պարկը լցված էր ժողովրդով. տրիբունները, ծառերը, մինչև անգամ տների կտուրները ևս լիքն էին ժողովրդով: Կայարանը, որին պէտք է մօտենար կայսերական գնացքը, շինված է ռուսաց ճաշակով. մի կողմից նա ծածկված է ապակեայ գալերէյայով: Մեծ քանակութեամբ կանաչ, դալկեայ ծառեր, ծաղիկներ, թաւշեայ գորգեր, չքեղ ոսկեջրած կարասիք Լուդովիկոս XVI-դի ոճով, զարդարում էին կայարանը: Նոցա Մեծութիւններին դիմաւորելու համար կայարանի ձախ մասում կանգնեց Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնայի ուլանների գնդի պատուոյ պահնակախումբը՝ դրօշակով և երաժշտների խմբով: Պահնակախմբի աջ թևի վրա գտնվում էր էսկադրոնի Օգոստափառ հրամանատար Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչ: Թագաւորին և Թագուհուն դիմաւորողների մէջ գտնվում էին ոչ միայն Պետերբուրգի և Մոսկվայի, այլ և ամբողջ Ռուսաստանի բոլոր բարձր պաշտօնեաները, մինիստրները, պետական խորհրդի անդամները, Թագաւորի սվիտան, գեներալները, ծովակալները և այլն: Երրորդ ժամին մօտ սկսեցին հաւաքվել Կայսերական ընտանիքի անդամները և արդէն Մոսկվայում գտնվող օտար աղգի պրինցները:

5 ժամ 27 րոպէին բարձրաձայն «ուրայի» ձայնը աւետեց Կայսերական գնացքի մօտենալը: Տիրեց հանդիսաւոր լռութիւն. երաժշտութիւնը ածեց «դիմաւորումն», Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնայի լէյբ-ուլանները զինուորական պատիւներ արին: Նոցա Մեծութիւններին դիմաւորեցին Կայսերական ընտանիքի անդամները և Մոսկվա եկած բոլոր օտար պրինցները: Երկաթուղու կառավարիչ Շիլովսկու կինը մատուցեց Թագուհի Կայսրուհուն ծաղիկների մի չքեղ փունջ:

Նոցա Մեծութիւնների հետ միասին ժամանեցին, Մոսկվայի օգոստափառ գեներալ-նահանգապետը, որը դիմաւորեց Նոցա Մեծութիւններին Կլին կայարանում, Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաեվնա, և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ իր ամուսնու՝ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնայի հետ:

Թագաւոր Կայսրը մօտեցաւ զօրաբաժինների բոլոր գլխաւորներին և ապա Նոցա Մեծութիւնները փակ կառքով, ժողովրդի հիացման աղաղակների ուղեկցութեամբ, գնացին Պետրովսկի պալատը: Նոցա Մեծութիւնների կառքի առաջ ձիով գնում էին Նորին Մեծութեան սեփական թիկնապահ գնդի օֆիցերները կարմիր էշերկէսկաներով. հետևեալ կառքերով գնում էին՝ Մեծ Իշխաններ Սերգի Ալէքսանդրովիչ, Ալէքսանդր Միխայլովիչ և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնա, ապա Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաեվնա, դաստիարակչուհու և դայեակի ուղեկցութեամբ:

«Ուրայի» ոգևորված աղաղակները հնչում էին, մինչև որ Նոցա Մեծութիւնները մտան Պետրովսկի պալատը, ուր կտուրի վրա ծածանվեց Կայսերական դրօշակը: Պալատում հաւաքվեցին Նոցա Մեծութիւններին դիմաւորելու՝ յունաց թագուհին, Ռումինիայի թագաժառանգ իշխանուհին, Մարիա Պավլովնա, Ելիսավետա Ֆեօդորովնա, Ելիսավետա Մավրիկիեվնա և Վէրա Կոնստանտինովնա Մեծ Իշխանուհիները, Վիրտէմբէրգեան դքսուհին իր աղջիկներով, Օլդենբուրգեան Եվգենիա պրինցուհին, պալատի մինիստրը պալատական պաշտօնեաներով, գեներալ-ադիւտանտ Կոստանդա՝ Մոսկվայի զինուորական շրջանի առանձին բաժինների գլխաւորների հետ: Բալորոն ընդունելով, թագաւորը անցաւ պատաւոր պահնակախմբի առջևից, բարևելով նրան. դրանից յետոյ Նորին Մեծութիւնը աղ ու հաց ընդունեց Մոսկվայի զէմստվոյից: Անցնելով առանձին մասերի գլխաւորների առջևից, Նոցա Մեծութիւնները բարձրացան երկրորդ յարկը, կլոր Սպիտակ դահլիճը, ուր գտնվում էին՝ պալատական աւագ քահանայ Եանիշեվ, հոգևորականութիւնը և պալատական երգեցիկ խումբը: Նոցա Մեծութիւնների դալուց յետոյ, կարճ մաղթանք կատարվեց՝ երկարակեցութիւն մաղթելով Նոցա Մեծութիւններին, Թագաժառանգ Ցէսարեվիչին և ամբողջ Կայսերական տանը: Մաղթանքից յետոյ Նոցա Մեծութիւնները մտան ներքին սենեակները, որոնք գտնվում են կլոր դահլիճի աջ կողմում, պալատի երկրորդ յարկում:

Նոցա Մեծութիւնների Մոսկվա գնալու ժամանակ, Տվէր և Կլին կայարաններում, այդ քաղաքների դասակարգային ներկայացուցիչները Նոցա Մեծութիւններին աղ ու հաց մատուցին:

Փրկիչ Քրիստոս տաճարում, թագաւոր Կայսրի ծննդեան օրը, պատարագից յետոյ, հանդիսաւոր մաղթանք կատարվեց: Եկեղեցում գտնվում էին Մոսկվա եկած ուղղափառ բոլոր հովուապետները: Տաճարը լի էր: Մաղթանքին ներկայ էին՝ ամբողջ թագաւորական Ընտանիքը և պալատի բոլոր բարձրաստիճան պաշտօնեաները:

ՄՈՍԿՎԱ, 6 մայիսի: Ժամանեցին Մոսկվա՝ Հէսսէնի մեծ դուքսը և Բատենբերգեան պրինցը իրանց ամուսիններով, Բադէնի թագաժառանգ պրինցը, Դանիայի թագաժառանգ պրինցը, Եաղոնական Սաղալարա պրինցը, Վիրտէմբէրգեան Ալբրէխտ պրինցը: Հիւրերին դիմաւորեցին Թագաւորական ընտանիքի անդամները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի: Յերեկվայ $12^1/_2$ ժամին, Նոցա Մեծութիւնները ընդունեցին բուխարական էմիրին, նրա ժառանգին և սվիտային: Էմիրը հանդիսաւոր կերպով փոխադրվեց Պետրովսկի պալատը: Պալատը գալուց յետոյ՝ էմիրին դիմաւորեց պալատի մինիստրը, ծայրագոյն ատրաղապետը և հոֆմարշալը: Մի քանի ժամանակից յետոյ, իշխան Դոլգորուկի տարաւ էմիրին այն առանձնասենեակը, ուր գտնվում էին Նոցա Մեծութիւնները: Ողջունելուց յետոյ, էմիրը մատուցեց Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնային բուխարական ամենաբարձր շքանշանը ամենախոշոր բրիլիանտներից: Դուրս գալով առանձնասենեակից, Նոցա Մեծութիւնները ընդունեցին բուխարական թագաժառանգին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի: Մայիսի 7-ին, բարեհաճեց Պետերբուրգ հասնել Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնա, Օգոստափառ որդկերանցով:

ԼՕՆԴՕՆ, 8 մայիսի: Թաւրիզից հաղորդում են, որ Մուզաֆէր-էդ-դին Շահը, ուսաց և անգլիացոց ընդհանուր հիւպատոսների ուղեկցութեամբ, ճանապարհ ընկաւ Թէհրան: Երկիրը խաղաղ է: Շահի սվիտան՝ 1000 հոգի է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ. Աւետիք Արասխանեանցին. Երէկ, մայիսի 7-ին, նշանակած 12 ժամին, դուք չը բարեհաճեցիք գալ «Մշակի» խմբագրատունը: Բայց դրանից, դուք ոչ մի տողով չը բացատրեցիք ձեր չը գալու պատճառը, մինչդեռ ձեզ վրա բարոյական անխուսափելի պարտք կար ստուգել փաստը և յետ վերցնել ձեր խօսքը: Այդպիսով ձեր պատասխանատուութիւնը աւելի ծանր կերպարանք է ստանում:

ԲԱԳՈՒ. Վ. Փափազեանց. Ձեր պատասխանը «Շաւիղի» դէմ չի տպագրվի: Մենք մեր պարտքը կը համարէինք անմիջապէս տպագրել ձեր հերքումը, եթէ դա վերաբերվեր «Մշակի» մէջ տպված որ և է յօդուածի: Բայց քանի որ դուք հերքում էք «Շաւիղի» գրածները, նեղութիւն կրեցէք դիմել ուղղակի այդ լրագրին, մանաւանդ որ, ինչպէս յայտնել է «Շաւիղը» իր վերջին համարներից մէկում, պատրաստ է տպագրել ձեր բոլոր պատասխանները՝ առանց փոփոխութեան:

ՆԻՇԱՒՈՒՐ (Պարսկաստան) Յ. Ղազեանց. Ձեզանից առաջ ոչ մի նամակ չենք ստացել հացի համար: Համաձայն ձեր վերջին նամակին՝ կը փոխենք հասցէն:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԺՕԿԻ ԱՄԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հինգշաբթի, մայիսի 9-ին
Տեղի կունենայ
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ - ԼԻՏԵՐԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ԼՕՏՕՐԷԱՆ

Կը նուագեն երաժշտական երկու խմբեր: Մուտքի գինը 20 կոպէկ: Երեխաները վճարում են կէսը: Սկիզբը ուղիղ ժամի 4-ին կէսօրից յետոյ:

Վիճակախաղը կը կայանայ, ինչպիսի եղանակ և լինի: 1—1

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՒԲԵԱՆԻ

(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻԶՈՒՄ)

Ընդունում է երեխեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ, պատրաստում է գիմնազիաների, կադետների կորպուսի, զեմլէմէրների, բէալական ուսումնարանների համար:

Ուսումնական տարվայ վարձն է փոքր պատրաստականի համար 60 ռուբլի. մինչև երկրորդ դասատուն 100 ռ. երկրորդից վեր՝ 150 ռուբլի:

Այս տարի գիմնազիա և բէալական ուսումնարան մտնելու համար քննութիւն տուող 12 աշակերտներից 11 հոգի յաջողութեամբ քննութիւն են տուել և ընդունվել, որ կազմում է 92%:

ՈՒՍՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԱՄԲՈՂՋ ԱՄԱՌ

Հասցէն. ТИФЛИСЪ. Сололаки. Гановская ул., № 11. собст. домъ.
(№ 47) (5) 5—10

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին: Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գետնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ: Նա շատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուսեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցեմը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար: Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի: (№ 23) 10—50

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

		Գինը
1)	ԷՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու	50 կոպ
2)	ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու	20 «
3)	ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի.	50 «
4)	ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի.	20 «

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Мая 1896 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.